ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. ապրիլի 26-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **14.04.2023թ-ի «Աչաջուր Յունայթեդ-09» «Նոա-09» (14B-058) խաղին 1) «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Նարեկ Օհանյանի (41688) մրցակցին հարվածելը 2) «Նոա-09» թիմի ֆուտբոլիստ Ռաֆիկ Թումասյանի (45275) մրցակցին ոտքով հարվածելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Նարեկ Օհանյանի (41688) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք

ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Աչաջրի գ/պետ-ն»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

2) Հաստատված համարել «Նոա-09» թիմի ֆուտբոլիստ Ռաֆիկ Թումասյանի (45275) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

2. 21.04.2023թ-ի «Փյունիկ-3-10»-«Փյունիկ-1-11» (13Գ-031) խաղին «Փյունիկ-3-10» թիմի ֆուտբոլիստ Լևոն Մուրադյանի (42445) կողմից խաղային իրավիճակում մրցակցին հարվածելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Փյունիկ-3-10» թիմի ֆուտբոլիստ Լևոն Մուրադյանի (42445) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 14-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի եռապատիկի՝ 3,000 ՀՀ դրամի չափով:

3. 21.04.2023թ-ի «Վան»-«Լեռնային Արցախ» (ՊԼ-137) խաղին 1) շտապ օգնության մեքենայի ուշ ժամանելը 2) 2 էլեկտրոնային ցուցատախտակի փոխարեն մեկ էլեկտրոնային և մեկ մեխանիկական ցուցատախտակ ունենալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Վան» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Վան ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2) Հաստատված համարել «Վան» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ «Վան ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. 22.04.2023թ-ի «Արարատ-Արմենիա»-«Ուրարտու» (ՊԼ-139) խաղին 1) դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից խաղաժամանակահատվածում ձայնային ռումբերի, ֆայերների և բենգալյան կրակների արձակում 2) հյուր թիմի ողջ անձնակազմի խաղադաշտ ներխուժելը և գոլը տոնելը 3) հյուր թիմի երկրպագուների կողմից խաղաժամանակահատվածում ձայնային ռումբերի, ֆայերների և բենգալյան կրակների արձակում 4) դաշտի տեր թիմի մամուլի ծառայության աշխատակիցների արգելված եզրային գծի վրա գտնվելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրյոթանասունհինգապատիկի՝ 175,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 18-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
3) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրքսանհինգապատիկի՝ 125,000 ՀՀ դրամի չափով:
   Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:
4) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. 21.04.2023թ-ի «Վեստ Արմենիա»-«Փյունիկ Ակադեմիա» (ԱԽ-155) խաղին 1) ՀՀ և ՀՖՖ դրոշների բացակայությունը, 2) ֆոտոլրագրողի՝ սխալ տեղայնքում գտնվելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Վեստ Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Վեստ Արմենիա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2) Հաստատված համարել «Վեստ Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Վեստ Արմենիա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6. 22.04.2023թ-ի «ԲԿՄԱ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ-152) խաղի ուշացումով սկսելը նախախաղային մարզման ժամանակ ֆուտբոլիստների հարվածների հետևանքով դարպասների ցանցի պարանների կտրված լինելու պատճառով

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ԲԿՄԱ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 41-րդ կետը՝ «ԲԿՄԱ» թիմի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

7. **23.04.2023թ-ի «Արարատ – Արմենիա 2»-«Սյունիք» (ԱԽ-151) շտապ օգնության մեքենայի ուշ ժամանման պատճառով խաղի 17 րոպե ուշացումով սկսելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա 2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 41-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

8. **23.04.2023թ-ի «Միկա»-«Ուրարտու-2» (ԱԽ-154) խաղին պահեստային դարպասների առկայությունը անհամապատասխան վայրում**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Միկա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Միկա ՍԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

9. **19.04.2023թ-ի «Արագածավան-13»-«Ն.Սասնաշեն-13» (10Մ5-005) խաղին «Արագածավան-13» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արագածավան-13» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Արագածավանիգ/պ-ն»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով:

10. **«Կարբի-12» թիմի առաջնության ընթացքում երեք տեխնիկական պարտություն ստանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Կարբի-12» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 8-րդ կետը՝ թիմին հեռացնել առաջնությունից և զրկել տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցումներին, այլ մրցաշարերի խաղերին մասնակցելու իրավունքից:

11. **«Արարատ-աղջիկներ» թիմի առաջնության ընթացքում երեք տեխնիկական պարտություն ստանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-աղջիկներ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 8-րդ կետը՝ թիմին հեռացնել առաջնությունից և զրկել տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցումներին, այլ մրցաշարերի խաղերին մասնակցելու իրավունքից:

12. **16.04.2023թ-ի «Էկովիլ»-«Բենտոնիտ» (ՍՖԱ-014) խաղին «Բենտոնիտ» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Բենտոնիտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Բենտոնիտ ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահը,

Հաշվի առնելով Կոմիտեի կողմից 2023 թվականի ապրիլի 26-ի թիվ 11 արձանագրության 12-րդ կետով արձանագրված որոշման մեջ տեղ գտած վրիպակը, ինչպես նաև ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը,

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 8-րդ հոդվածը՝

Որոշեց՝

1. Կոմիտեի 2023 թվականի ապրիլի 26-ի թիվ 11 արձանագրության մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ և 12-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

12. 16.04.2023թ-ի «Էկովիլ»-«Բենտոնիտ» (ՍՖԱ-014) խաղին «Բենտոնիտ» թիմի չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Բենտոնիտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 50-րդ հոդվածի 2-րդ կետը՝ «Բենտոնիտ ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով:

2. Հանձնարարել Կոմիտեի քարտուղարին «Բենտոնիտ ՖԱ»-ին պատշաճ ծանուցել սույն որոշման վերաբերյալ,
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Կ. Հովհաննիսյան

28.04.2023թ.